ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՆՁՆՎԵՑ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐԻ ԴԻՊԼՈՄ

Ապրիլի 27-ին Երևանի Պետական Համալսարանի հանդիսությունների դահլիճում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանձնվեց ԵՊՀ Պատվավոր Դոկտորի դիպլոմը:

Համալսարանի Ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը, ողջունելով Գարեգին Ա Կաթողիկոսին, ասաց, որ Երևանի Պետական Համալսարանի 76-ամյա տարեգրության մեջ այս օրը պիտի արձանագրվի որպես պատմական մեծ իրադարձություն, քանի որ առաջին անգամն է, որ կրթօջախ է ոտք դնում Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Օրը էլ ավելի է նշանավորվում նրանով, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը համընկնում է Նորին Սրբությանը՝ ԵՊՀ Պատվավոր Դոկտորի դիպլոմի հանձնման հանդիսավոր արարողության հետ:

Շարունակելով իր խոսքը, Պրն. Մարտիրոսյանը նշեց, որ այս այցելությամբ սկիզբն է դրվում Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու և Պետական Համալսարանի սերտ համագործակցության, որի արդյունքում ծնունդ կառնեն բազմաթիվ գեղեցիկ նախաձեռնություններ ու ծրագրեր:

Ավարտելով խոսքը, Ռադիկ Մարտիրոսյանը, բուռն ծափահարությունների ուղեկցությամբ, Նորին Սրբությանը հանձնեց ԵՊՀ Պատվավոր Դոկտորի դիպլոմը:

Վեհափառ Հայրապետին ողջույնի և շնորհավորանքի ջերմ խոսքեր ուղղեցին նաև ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Շահե արքեպս. Աճեմյանը, Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանը, ԵՊՀ Բանասիրության ֆակուլտետի դեկան Գառնիկ Անանյանը: Ուսանողության անունից Նորին Սրբությանը ողջունեց Աստվածաբանության առաջին կուրսի ուսանող Լևոն Պետրոսյանը:

Ելույթներից հետո շնորհակալանքի իր խոսքն ասաց Գարեգին Ա Կաթողիկոսը: «Առավել քան 60 տարիների իմ կյանքում այս պահը անփոխարինելի զգացումների, հուզական ու հոգեկան ապրումների բացառիկ պահ է: Իսկապես, բարձր պատիվ եմ համարում լինել Պատվավոր Դոկտորը այնպիսի մի կրթական հաստատության, ինչպիսին Երևանի Պետական Համալսարանն է: Այս առիթով իմ խորը երախտագիտությունն եմ ուզում արտահայտել Համալսարանի Գիտական խորհրդին՝ այս բարձր կոչումն արժանանալու և այս գեղեցիկ հանդիպումը կազմակերպելու կապակցությամբ», ասաց Նորին Սրբությունը:

Շարունակելով խոսքը, Վեհափառ Հայրապետը իր խորհրդածություններն արտահայտեց մշակույթ-կրոն հարաբերության մասին՝ ընդգծելով, որ որևէ ժողովուրդ չի կարող գոյատևել առանց հավատի և հոգևոր արժեքների, չի կարող բարգավաճել, եթե չկարողանա տարբերակել իսկական արժեքները կեղծ արժեքներից: «Ազգը չի ապրի, եթե չլինի հոգու և մարմնի ներդաշնակություն՝ մտքի ղեկավարությամբ: Եվ Համալսարանն է եղել ու կա՝ մեր ազգի իսկական արժեքները պահպանող և դրանք հաջորդ սերունդներին փոխանցող կարևորագույն դարբնոցը»: Այս հանդիպումով Մայր Աթոռի և Համալսարանի միջև մի նոր կամուրջ գցվեց, իր խոսքը եզրափակելով ասաց Նորին Սրբությունը, գործուն, բանուկ, կենդանի և ստեղծարար կամուրջ՝ Համալսարանի և Գևորգյան Ճեմարանի միջև, որով սկիզբ կդրվի մի արդյունավետ գործակցության՝ վասն մեր ազգի ու պետության, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու բարգավաճման:

Հանդիսությունն ավարտվեց ԵՊՀ ուսանողների ջանքերով կազմակերպված համերգով: